ՃՄԻՆԻ (ԱԼԹԻՆ ԹԵՓԵ) ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

(Արևմտյան Հայաստանի ուրարտական հուշարձանները)

Պատմ. գիտ. դոկտոր Ս. Ա. ԵՊԱՏՅԱՆ, Լ. Վ. ԱԲԱՋՅԱՆ

Ճմինի ամրոցը գտնվում է պատմական Հայաստանի Բարձր Հայք նահանգի Եկեղյաց գավառում, Ճմինից 4 կմ հարավ և 26 կմ Երգնկայից արևելք[1]։ Այն տեղադրված է մոտ 60 մ բարձրություն և 20 մ երկարություն ունեցող բլրի գագաթին։ Դեռ 1930 թ. պատահական աշխատանքների ժամանակ բացվել է մի դամբարան, որի նյութի զգալի մասը տեղափոխվել է Անկարայի թանգարան։ 1956 թ. բացվում է երկրորդ դամբարանը։ Գտնված նյութը գրավում է դիտողների ուշադրությունը և 1956 թթ. Օզգյուչի ղեկավարությամբ սկսվում են սիստեմատիկ պեղումները, որոնց ժամանակ բացվում են ամրոցի շինությունները և մեծ հետաքրքրություն ներկայացնող դամբարանները։ Ցավոք, պեղումների ընթացքում ամրոցի ուրարտական անվանումը պարզաբանող որևէ արձանագրություն չի գտնվել։ Հայտնաբերված նյութի հիման վրա ամրոցը կոչվել էր Ալթին Թեփե (Ոսկե բլուր)։ Սակայն մենք նպատակահարմար ենք գտնում հուշարձանը անվանել մոտակա հայկական գյուղի անունով, այն է՝ Ճմին։

Հարկ է նշել, որ Ճմինն իր ճարտարապետությամբ և հնագիտական նյութով մեծապես նպաստեց ուրարտական ճարտարապետության և արվեստի ուսումնասիրությանը։ Բացի Թ. Օզգյուչից, որը հրատարակել է երկհատոր աշխատություն և բազմաթիվ հոդվածներ, մի շարք գիտնականներ, ինչպիսիք են Վ. Կլեյսը, Թ. Ֆորբսը և այլք, իրենց աշխատություններում[2] անդրադարձել են Ճմինի պաշտպանական, պալատական և տաճարային համալիրի ճարտարապետությանը։

Ե. Ակուրգալի, Մ. Ն. վան Լունի, Հ. Հ. Ֆոն դեր Օսթենի, Ռ. Դ. Բարնետի, Ֆ. Սթեյնհերի աշխատություններում[3] մեծ տեղ են գրավում Ճմինի որմնանկարչությունն ու մյուս հարուստ նյութերը, որոնցից շատերը արվեստի բարձրարժեք նմուշներ են։ Ցավոք, պետք է նշել, որ այս հուշարձանի թուրքերեն ու եվրոպական մի շարք լեզուներով հրատարակված գրականությունը մեզ մոտ բավարար չափով չի լուսաբանված։ Հայերեն և ռուսերեն աշխատություններում նշվում են միայն ճարտարապետությանն ու հնագիտական նյութին առնչվող որոշ հարցեր և չկա մի ամփոփ աշխատություն,

---

[1] Гр. А. Капанцян. Хайаса—колыбель армян. Ереван, 1947, с. 101.

[2] W. Kleiss. Zur Rekonstruktion des urartäischen Temples (Istanbuler Mitteilungen), 1963, (1964); Th. Forbes. The Urartian Architecture, London, 1983.

[3] E. Akurgal. Urartäische und Altiranische Kunstzeugnisse. Ankara, 1968; M. N. van Loon. Urartian Art its distinctive traits in the light of new excavations. Istanbul, 1966; H. H. von der Osten. Neue urartäische Bronzen aus Erzincan (VI Int. kongress für Arch., 1939), Berlin, 1940; F. D. Barnett and N. Göçke. The Find of Urartian Bronzes at Altintepe near Erzincan.—Anatolian Studies 3, 1953; F. Steinherr. Die Urartäische Bronzen von Altintepe.—Anatolia 3, 1958.

որը թույլ տար լրիվ պատկերացնել այս վերին աստիճանի հետաքրքիր հուշարձանը։

Սույն հոդվածում փորձ է արվում հրատարակված գրականության օգնությամբ նկարագրել և մեկնաբանել Ճմինի հարուստ ճարտարապետությունն ու հնագիտական նյութը, որը, բնականաբար, չի ուսումնասիրվում հոդվածի նեղ սահմաններում նկարագրվածով։

Ամրոցը գրավում է բլրի գագաթը և հայտնի է առավելապես տաճարի, սյունազարդ դահլիճի և ներքին կառույցների շնորհիվ։ Ինչ վերաբերում է պաշտպանական կառույցներին, ապա դրանք քիչ են ուսումնասիրված և չեն նշվում հրատարակված հատակագծում։ Ցորբսը, որ ուսումնասիրել է ուրարտական ճարտարապետությունը, նշում է, որ ամրոցի պաշտպանական պարիսպները երկզրահանի են, երկու կողմից դրված, հսկայական, մինչև 40 տ ծանրությամբ քարե զանգվածների միջուկը լցված է քարահողային լիցքով։ Ինչպես տեսնում ենք, այս տեխնիկան ավելի բնորոշ է հին կիկլոպյան ամրոցաշինությանը և վկայում է, որ մ. թ. ա. VIII դարում Բիայնական թագավորությունում շարունակվում էին Հայկական լեռնաշխարհի շինարարական ավանդույթները։ Պարիսպների քարե հիմքի վրա կառուցվել են 12 մ հաստությամբ հում աղյուսե պատեր՝, որը եզակի է, քանի որ ուրարտական պարիսպների պատերի հաստությունը տատանվում է 2,5—5 մ միջև։ 12 մ հաստությունը, հավանաբար, բացատրվում է պարսպի միաշար լինելով։ Պարիսպները ամրացված են իրարից 11 մ հեռավորության վրա տեղադրված ուղղանկյուն որմնահեցերով, որոնք պատերից առաջանում են 1—2,25 մ երկարությամբ։ Սա նույնպես ուշագրավ է։ Սովորաբար ուրարտական որմնահեցերի լայնությունը 5—7 մ է։ Ավելի լավ են պեղված և մանրամասն ուսումնասիրված տաճարը, բակը, պալատական շինությունների մի մասը։ Վանի թագավորության մեջ հայտնի տաճարները երկու տիպի են՝ քառակուսի և ուղղանկյուն հատակագծերով։ Բակի խորքում տեղադրված տաճարը քառակուսի է, 13,9×13,9 մ չափերով։ Ուղղանկյուն հատակագիծ ունեն Արգիշտիխինիլիի[5] և Էրեբունիի[3] տաճարները, Ներքին Խնձորի (Կայալի դերե)[7], Թոփրակ կալեի[8], Հայկաբերդի[9], Ազնավուր թեփեի[10] տաճարները ունեն քառակուսի հատակագիծ։ Վերոհիշյալ տաճարները կառուցողական մանրամասներում շատ ընդհանուր գծեր ունեն։ Սակայն նշենք նաև, որ չնայած հատակագծային տարբերությանը, ճարտարապետական հորինվածքի առումով Ճմինը շատ նման է Էրեբունիի Խալդի աստծու տաճարին։ Երկուսն էլ տաճարի շուրջն ունեն սյունաշար, և ի տարբերություն մյուս տաճարների, որոնք մեծ մասամբ կառուցված են որպես առանձին շինություններ, ընդգրկում են ոչ միայն տաճարը, այլև պալատական շինություններ, գրավելով մեծ տարածք։ Հետևաբար, Ճմինը պետք է դիտել որպես «տաճար-պալատ» միավոր։

Տաճարի հիմքը կառուցված է սրբատաշ անդեզիտից, որի վրա պահպանվել են հում աղյուսե պատերը։ Տաճարի չորս անկյունները ստեղծում են 0,5 մ որմնահեցեր։ Պատերն ունեն 4,35 մ հաստություն, որի հետևանքով ցելլան փոքր է՝ 5,2×5,2 մ։ Մուտքի շեմքն ունի երկու աստիճան, որոնց երկու կողմում դրված են մեկական փոքր անցքեր ունեցող սրբա-

[4] Th. Forbes. Op. cit., p. 21.

[5] А. А. Мартиросян. Аргиштихинили. Ереван, 1967, с. 86.

[6] К. Л. Оганесян. Эребуни. Ереван, 1980, с. 50, 62.

[7] C. A. Burney. A First season of excavations at the Urartian Citadel of Kayalidere.—Anatolian Studies, 16, 1966, p. 63, 69.

[8] Th. Forbes. Op. cit., p. 81.

[9] A. Erzen. Cavustepe, Ankara, 1983, S. 7.

[10] Th. Forbes. Op. cit., p. 78.

տաշ քարե սալեր։ Այս անցքերում, հավանաբար, դրվել են նիզակներ[11], խորհրդանշելով աստծուն, որին ձոնվել է տաճարը։

Մուտքի տանիքը ըստ Թ. Օզգյուչի եղել է երկթեք[12]։ 1,5 մ լայնությամբ և 3,8 մ երկարությամբ միջանցքը տաճարի մուտքը կապում է ցելլայի հետ։ Ցելլայի հատակը կավածեփ է և հնարավոր է, որ հնում այն ծածկված է եղել խսիրով կամ գորգով։

Բոլոր պատերի տակ պահպանվել է նեղ սրբատաշ քարից կառուցված նստարան։ Ցելլայի խորքում գտնվում է 1,9×1,45 մ քարե պատվանդան[13]։ Հաշվի առնելով պատվանդանի չափերը, կարելի է ենթադրել, որ նրա վրա դրված աստծու արձանը, հավանաբար, մեծ ծավալ է ունեցել։ Պատվանդաններ պահպանվել են նաև բիայնական այլ հուշարձաններում՝ Ներքին Խընձորում, Էրեբունիում, Թոփրակ կալեում և այլուր։ Սակայն դրանցից ոչ մեկում, ինչպես և Ժմինում, արձաններ չեն գտնվել։ Պատվանդանի դիմաց՝ հատակին, գտնվել են երկու երկաթե և երկու բրոնզե գայիսոնի գլխիկներ, նետասլաքներ[14] և այլ իրեր։

Ցելլայի պատերը պահպանվել են 1,15 մ բարձրությամբ։ Հում աղյուսը ծածկվել է սվաղի հաստ շերտով, որի վրա պահպանվել են ուրարտական ավանդական դույներով (կարմիր, կապույտ, սպիտակ, սև, դարչնագույն) պատկերված երկրաչափական և բուսական զարդամոտիվներ։ Որևէ արձանագրություն տաճարի անվան վերաբերյալ չի պահպանվել, սակայն տաճարում և սյունաշարի տարածքում գտնված նյութը կարող է լույս սփռել այս հարցի վրա։ Այսպես, տաճարի մուտքի երկու սալերում, ինչպես արդեն վերը նշվեց, տեղադրված են եղել նիզակներ։ Մուտքի մոտ գտնվել են նաև վահաններ, պատվանդանի դիմաց՝ գայիսոնի գլխիկներ, նետասլաքներ, հարավային սյունաշարի տարածքում՝ սաղավարտներ, վահաններ և այլն։ Այս բոլոր իրերը անմիջականորեն կապվում են ուրարտական պանթեոնի գլխավոր աստված Խալդիի երկրպագության հետ և կարելի է համոզված ասել, որ տաճարը ձոնված է եղել Խալդիին։ Նվիրական վահաններ, սաղավարտներ, կապարճներ և այլ իրեր մեծ թվով գտնվել են Կարմիր բլուրում[15], որտեղ նրանք տեղափոխվել են Էրեբունիի Խալդի աստծու տաճարից. Մուսասիրի տաճարի արտաքին պատերին նույնպես պատկերված են վահաններ, իսկ տանիքին՝ նիզակ։ Ինչ վերաբերում է նրա ներքին հարդարանքին, ապա Սարգոն II-ի տեղեկությունների համաձայն, այստեղ նույնպես եղել են բազմաթիվ վահաններ[16]։

Տաճարը, որը տեղադրված է ընդարձակ, 27×27 մ չափսով բակի խորքում, չորս կողմից շրջապատված է սյունաշարով։ Պահպանվել են 0,2 մ բարձրությամբ և 0,7 մ տրամագծով քսան սրբատաշ սյունախարիսխ, որոնց վրա դրվել են 4,5 մ բարձրությամբ փայտե սյուներ[17] պահելով հեծանային ծածկը։ Սյունաշարի հատակը սալապատված է մանր քարերով։ Հարավային սյունաշարի հատակը պեղելիս գտնվել են բրոնզե սաղավարտներ, վահաններ, երկաթե ու բրոնզե նիզակներ, փղոսկրե իրեր և հավանաբար կահույքին պատկանող ոսկու բարակ թիթեղներ, սեղան՝ երեք բրոնզե ոտքերով և դռան բրոնզե շղթա[18]։

---

11 Նույն տեղում։

12 T. Özgüç. The Urartian Architecture on the summit of Altintepe.—Anatolia vol 7, 1963 p. 46.

13 T. Özgüç. Altintepe. Mimarlik Antilari ve Duvar Resimleri—Architectural Monuments and Wall Paintings.—Türk Tarih Kurumu Basimevi Ankara, 1966, p. 41.

14 T Özgüç. Altintepe I, p. 41.

15 Б. Б. Пиотровский. Кармир Блур II. Ереван, 1952 с. 62.

16 Б. Б. Пиотровский. Искусство Урарту. Л., 1962, с. 36.

17 T. Özgüç. Altintepe I, p 39.

18 Նույն տեղում, էջ 42։

Ընդարձակ բակը բոլոր կողմերից շրջապատված է 2,5 մ հաստությամբ պատերով։ Այստեղ գտնվել են երեք զոհասեղաններ։ Գլխավորը՝ տաճարի մուտքի դիմաց, երկրորդը՝ բակի մուտքի դիմաց և երրորդը՝ տաճարի հետևի մասում։ Կարելի է ենթադրել, որ ցեղայում կատարվել են հաղորդություն և այլ արարողություններ, իսկ զոհաբերությունը կատարվել է բակում, այդ պատճառով տարօրինակ է, որ արյունը բակից դուրս բերելու համար ցամաքուրդային խողովակ չի դանվել։

Անկասկած, կրոնածիսական նշանակություն ունեին նաև բակի արևմտյան մասում տեղադրված երեք ուղղանկյուն սենյակները (6,5×5,6, 5×14,5, 6,5×5 մ չափերով)։ Նրանք իրար միացած են դռներով և միայն մեկ կենտրոնական դռնով միանում են բակին։ 0,3 մ բարձրությամբ պահպանված պատերը ծածկված են սվաղով ու որմնանկարների բեկորներով։

Դեպի արևմուտք պեղվել են պալատական համալիրին պատկանող տարբեր չափերի չորս սենյակ, որոնք ամենայն հավանականությամբ կապված են եղել երկրորդ, բաց բակի հետ։

Ցամաքուրդային խողովակներ գտնվել են միայն համալիրի արևմտյան մասում։ Դրանք երկարավուն, սրբատաշ, կիպ դրված քարե պայտաձև կիսախողովակներ են, որոնց միացման տեղերը լցված են կավով[19]։ Հատակի սակ տեղադրված այս խողովակները ծածկված են կոպտատաշ քարերով։ Ցամաքուրդային երկրորդ համակարգը գտնվում է արևմտյան սյունաշարի տակ։ Սրանք ուղղանկյուն են, ավելի լայն և նույնպես ծածկված են քարերով։ Ցամաքուրդային խողովակներ գտնվել են Արին Ոերդում և Կարմիր բլուրի ամրոցի սենյակներում։

Տաճարի ամրոցի արևելյան մասը դեռ չի պեղվել, բայց երևում է, որ այն չի պահպանվել, քանի որ ընկած է շինարարական երկրորդ փուլի ժամանակ կառուցված բազմասյուն դահլիճի (հին պարսկերեն «ապադանա») տակ։

Ըստ Թ. Օզգյուչի, բիայնացիների գլխավոր նպաստը համաշխարհային ճարտարապետության մեջ բազմասյուն դահլիճներն են[20]։ Սակայն Թ. Ֆորբսը կասկածի սակ է առնում այս կարծիքը, հենվելով այն փաստի վրա, որ ուրարտական բազմասյուն միակ դահլիճը գտնվել է Ճմինում, ինչ վերաբերում է Էրեբունիի դահլիճին, ապա ինչպես հայտնի է, այն ավելի ուշ՝ աքեմենյան շրջանի վերակազմություն է[21]։ Հիմք ընդունելով տեղում գտնված բազմագույն խեցեղենը, որը կարելի է թվագրել ավելի ուշ շրջանով[22], և այն, որ կառույցը ասիմետրիկ է (ինչը բնորոշ չէ ուրարտական ճարտարապետությանը) և տեղադրված լինելով համալիրի հարավ-արևելյան մասում բարձրանում է և փաստորեն ծածկում տաճարը, Թ. Ֆորբսը ենթադրում է, որ բազմասյուն այս դահլիճը ուրարտական չէ։ Թերևս հնարավոր լիներ համաձայնվել Թ. Ֆորբսի այս կարծիքի հետ, եթե դահլիճի պատերը նկարազարդված չլինեին բնորոշ ուրարտական զարդամոտիվներով, որոնք ավելի ուշ շրջանով հնարավոր չէ թվագրել։ Այդ պատճառով մենք համամիտ ենք Թ. Օզգյուչի այն կարծիքին, որ Ալթին թեփեի բազմասյուն դահլիճը նման դահլիճների առաջին օրինակն է, որն ուրարտական ճարտարապետության մի շարք այլ տարրերի հետ ներմուծվել է աքեմենյան շրջանի ճարտարապետության մեջ և հայտնի է «ապադանա» անվամբ։

Ճմինի ապադանան ուղղանկյուն, 44×25,3 մ ներքին չափերով շինություն է, երեք մետր հաստությամբ պատերով։ Մուտքն ու կից կառույցները տեղադրված են արևելյան կողմում։ 18 սյունախարխխները (երեք շարքում

---

19 Նույն տեղում, էջ 43։

20 Նույն տեղում, էջ 44։

21 К. Л. Оганесян. Указ. соч., с. 61.

22 K. Emre. The Urartian pottery from Altintepe.—Belleten, 131. 1969, p. 279.

վեցական) ունեն 1,5 մ տրամագիծ։ Տանիքը հարթ է։ Դահլիճի հատակը կավածեփ է։ Բացառությամբ մի քանի ոսկու բեկորների ու դահլիճի հյուսիս-արևելյան մասում տեղադրված օջախի, որևէ այլ նյութ այստեղ չի գտնվել։ Դահլիճի արևելյան մասում կա երեք սենյակ, որոնցից կենտրոնականը դուրս է գալիս բակ։ Հավանաբար սրանք իրար մի՛անում են ներքին դռներով, ինչպես բակի արևմտյան մասում կառուցված սենյակները։ Այս սենյակների պատերը ծածկված են որմնանկարներով, որոնք կրկնում են ապադանայի որմնանկարները։ Բակում գտնված հինգ սյունախարխխները վկայում են այն մասին, որ ապադանայի բակում եղել է սյունաշար։

Ճմինի բոլոր կառույցները ունեն շինարարական երկու փուլ։ Տաճարային համալիրը կառուցվել է առաջին փուլում, իսկ ապադանան՝ երկրորդ։ Ընդ որում նրանց միջև ընկած ժամանակահատվածը մեծ չէ։ Դատելով նյութից, ըստ երևույթին առաջին փուլը համապատասխանել է մ. թ. ա. VIII դարի I կեսին, իսկ ապադանան՝ մ. թ. ա. VII դարի սկզբին։

Ուրարտական ամրոցների մեծ մասի կործանումը ուղեկցվել է մեծամասշտաբ հրդեհներով։ Ինչ վերաբերում է Ալթին Թեփեին, ապա այն կործանվել է երկրաշարժից։ Այդ իսկ պատճառով այլ հուշարձաններում սենյակները հարդարող որմնանկարները հրդեհի ժամանակ կործրացել են և պահպանվել են իրենց տեղերում։ Իսկ Ճմինում ընկած են անկանոն և նրանց հնարավոր լրիվ վերականգնումը կապված է որոշ բարդությունների հետ։

Ուրարտական մոնումենտալ արվեստի լավագույն նմուշները գտնվել են Էրեբունիում։ Որմնանկարները, որոնք գտնվել են Կարմիր բլուրում, Ազնավուր Թեփեում, Հայկաբերդում պահպանվել են բեկորային վիճակում։ Այս առումով Ճմինի որմնանկարները թեև նույնպես բարվոք վիճակում չեն, սակայն հնարավորություն են տալիս փոքրիշատե պատկերացնել շինությունների ներքին հարդարանքը։

Պահպանված որմնանկարների մեծ մասը գտնվել է ապադանայում, 1,5—1,6 մ բարձրության վրա։ Կարմիր ու կապույտ եզրաշերտից վեր պատկերված է նոնախնձորի պտուղներով դրասանգը։ Սրանցից վեր ութ պսակաթերթերով վարդյակներ են։ Ի տարբերություն Արին բերդի, որտեղ վարդյակների թերթերը բազմագույն են, Ճմինում հանդիպում են միագույն՝ սպիտակ կամ կարմիր վարդյակներ։ Վարդյակներից վեր թևավոր աստվածների շարքն է։ Նրանց գլուխներն ու ոտքերը պատկերված են կողքից, ուսերը և իրանը՝ քառորդ շրջադարձով։ Թևերը իջնում են մինչև կոնքերը։ Աստվածները կարմիր թիկնոցով ու սպիտակ գոտիով են, ոտքերը ներկված են կարմիր՝ ընդգծելով կոշիկները։ Գլխներին ունեն եղջերավոր խույր։ Աստվածները կանգնած են սրբազան ծառի երկու կողմում, մի ձեռքով բռնած ծառի ճյուղը, մյուսով՝ դույլը։ Նման պատկեր կա նաև Էրեբունիի որմնանկարներում։ Այս երկու հուշարձանների որմնանկարների նմանությունը բացատրվում է ոչ միայն արվեստի մշակված կանոններով ու կրոնական արվեստի պահպանողականությամբ, այլև տարբեր տրաֆարետների օգտագործմամբ, որոնք տարածված են եղել Հին Արևելքի արվեստում[23]։

Աստվածների հագուստը նույնպես հետաքրքիր է կրոնածիսական առումով։ Ինչպես հայտնի է, խեթական կրոնածիսական արարողությունների ժամանակ մեծ նշանակություն էին տալիս այսպես կոչված «մաքրված» հագուստներին[24], որոնք կրում էին արարողություններ կատարող քրմերը, ընդ որում պահպանված տեքստերում հատուկ նշվում են հագուստի կարմիր և սպիտակ գույները, որոնք խեթերի աշխարհընկալմամբ դրականորեն էին

[23] С. А. Есаян. Искусство портретного изображения Урарту.—Историко-филологический журнал, 1982, № 3, с. 184.

[24] В. Г. Ардзинба. Ритуалы и мифы Древней Анатолии. М., 1982, с. 53.

ազդում մարդու վրա։ Հավանաբար «դրական լիցք» կրող դույները ունեն նաև այլ բացատրություն, որը մեզ հայտնի չէ։ Աստվածների պատկերը սրբազան ծառի մոտ կապվում է նոր կյանքի, ծնունդի, բերքառատության և բարեկեցության հետ։ Հետևաբար, կարելի է ենթադրել, որ որմնանկարներում պատկերված աստվածների սպիտակ դոտին ե կարմիր հագուստները առնչվում են խեթական աշխարհընկալման այս գաղափարի հետ։

Հետաքրքիր է նշել նաև այն, որ դեղին, կանաչ, սև գույները խեթերի մոտ համարվում էին բացասական ազդեցության դույներ[25]։ Եվ ուրարտական որմնանկարներում էլ այս դույները հանդիպում են համեմատաբար քիչ. կանաչը՝ ծառերի, թփերի, տերևների ընդգծման համար, դեղինը՝ բացառությամբ Ազնավուր թեփեի ե Հայկաբերդի, այլ հուշարձաններում մեզ հայտնի չէ։ Իհարկե, չի կարելի խեթական արարողությունների և աշխարհընկալման գաղափարները նույնացնել բիայնացիների պատկերացումների հետ, առավել ևս դրավոր աղբյուրների բացակայության դեպքում, բայց չի էլ կարելի մոռանալ, որ Հայկական լեռնաշխարհը բնակեցնող ցեղերը դեռ ուրարտական պետության կազմավորումից էլ վաղ շփվել են խեթերի հետ, նրանցից փոխ են առել սպառազինության որոշ ձևեր, հիերոգլիֆ դրելաձևեր և ընդհանրապես, ունենալով մշակութային սերտ կապեր, կարող էին ունենալ նաև կրոնածիսական և աշխարհընկալման միանման գաղափարներ։

Աստվածներից վեր, կարմիր ֆոնի վրա սևով եզրագծված պատկերված են եղել աջ ոտքերը ծալած ցուլեր և քառակուսիներ։ Պահպանվել է ցուլի միայն մեկ պատկեր։ Նրա պոչը երկար է, հետևի ոտքերի արանքում։ Բաց դարչնագույն իրանի վրա սևով ընդգծված են կողերը։ Պոչի, կրծքի մորթին և բաշը արված են մի քանի սև գծիկներով։ Այն շատ նման է Արծկեի բարձրաքանդակի ցուլին[26]։ Հավանաբար, ցուլերը պատկերված են եղել քառակուսու երկու կողմերում կանգնած, ինչպես Արին բերդում, որտեղ հանդիպում են նաև քառակուսու երկու կողմերում կանգնած առյուծներ[27]։

Գտնվել են սֆինքսներ պատկերող մի քանի բեկորներ, որոնցից վեր կրկնվում են թևավոր աստվածների պատկերները։ Հաջորդ աստիճանաձև նախշն է, շատ նման էրեբունիի նույն զարդամոտիվին[28]։ Այս նախշը պատկերված է բաց դարչնագույն ֆոնի վրա, կարմիր ու կապույտ դույների հաջորդականությամբ և շրջապատված է սպիտակ շրջանակների ժապավենով։ Ամենավերևում վարդյակներ ու արմավանախշեր են, որոնք հավանաբար ավարտում են ամբողջ պատկերը։

Ապադանայում, բացի վերը նշվածից, գտնվել է նաև որսի տեսարան պատկերող մի քանի բեկոր։ 60 սմ բարձրությամբ որմնանկարի վրա պատկերված է ծառի մի կողմում դարանակալած առյուծ, մյուսում՝ եղջերու։ Մեկ այլ բեկորում առյուծը հարձակվել է եղջերուի վրա։ Պարզ երևում են եղջերուի մարմնի մեջ խրված առյուծի ժանիքները և եղջերուի լայն բացված սարսափահար աչքերը՝ ընդգծված սև բիրերով։ Առյուծի աչքերը, թաթերը, կնճռոտ քիթը, մկանները արված են մանրամասներով։ Համադրելով առյուծի այս պատկերը ուրարտական քանդակի, ինչպես նաև որմնանկարի վրա պատկերված ցուլը Արծկեի բարձրաքանդակի ցլի հետ՝ կարելի է համոզվել, որ քանդակի և որմնանկարի միջև որևէ ոճական տարբերություն չկա։

---

25 Նույն տեղում, էջ 211։

26 C. A. Burney and G. R. J. Lawson. Urartian reliefs at Adilcevaz on Lake Van and Rock relief from the Karasu near Bercik.—Anatolian Studies. VIII, 1952, p. 211—216.

27 К. Л. Оганесян. Указ. соч., с. 79.

28 Կ. Հովհաննիսյան. Էրեբունիի որմնանկարները. Երևան, 1973, էջ 15։

Տաճարին կից երկու սենյակներում գտնվել են դեմ հանդիման կանգնած սևաթաշ առյուծների, երկու եղջերուի, վարդյակների պատկերներ։ Ավելի բարձր պատկերված են իրար հաջորդող բաց դարչնագույն, կարմիր, կապույտ, սպիտակ վարդյակներ, կարմիր հագուստով աստվածներ՝ կանգնած սրբազան ծառի դիմաց։ Որմնանկարների առկայությունը այս երկու սենյակներում հաստատում է այն ենթադրությունը, որ այստեղ կատարվել են կրոնածիսական արարողություններ։ Նկարագրված սենյակներում ու գահլիճներում, բացառությամբ մի քանի խեցանոթի, հնագիտական նյութ չի գտնվել։ Համեմատաբար հարուստ է ցելլայում և սյունաշարում գտնված նյութը։ Այսպես, ցելլայում պատվանդանի դիմաց գտնվել են մի քանի երկաթե ու վեց բրոնզե նիզակի ծայրեր, երկաթե նետասլաքներ, երեք կարմիր խեցանոթ, փայտե փորագիր տախտակ, չորս գայիսոնի գլխիկներ։

Սյունաշարի տարածքում գտնվել են սաղավարտներ, վահաններ, երկաթե ու բրոնզե նետասլաքներ, փղոսկրից առյուծի, եղջերուի, թևավոր թռչնագլուխ գրիֆոնի քանդակներ, ոսկու բարակ թիթեղներ, որոնք հավանաբար պատկանել են կահույքին[29]։ Վերջինից գտնվել է միայն երեք բրոնզե ոտքերով սեղան, որի վրա հավանաբար դրվում էին աստծու արձանիկ, ծիսական անոթներ։ Իրերի մեջ գտնվել է նաև 29 օղակներով փոքր (1,90 մ երկարությամբ) շղթա[30], որը հավանաբար պատկանել է դռանը և ունեցել կրոնածիսական նշանակություն։ Այդպիսի շղթա ուրարտական որևէ հուշարձանում չի գտնվել, սակայն խեթական տեքստերից հայտնի է, որ դռան շղթայի տեղադրության ժամանակ կատարվել են ծիսական արարողություններ և հետագայում էլ զոհեր են մատուցվել շղթային[31]։

Սյունաշարի տարածքում գտնվել են նաև խեցանոթներ, ոսկե գլխիկներով գամեր[32]։

Բացի ամրոցից, բլրի հարավ-արևմտյան մասում պեղվել է երեք դամբարան։ Դրանցից առաջինն ունի ուղղանկյուն հատակագիծ՝ 9×4,5 մ չափերով ու բաղկացած է երեք դամբանասրահներից։ Դամբարանի պատերը կազմող խոշոր սալերի միջանկյալ տարածքը լցված է մանր քարերով։ Ներսի կողմից պատերը սրբատաշ են, արտաքինից՝ կոպտատաշ։ Մուտքը փակված է եղել խոշոր, ուղղահայաց դրված քարերով։ Առաջին և երկրորդ դամբանասրահների մուտքերը դուրս են գալիս դեպի դամբարանի արտաքին՝ 1 մ հաստություն ունեցող պատը։ Երկու սրահների միջև եղել է 80 սմ լայնությամբ դուռ, որը փակվել է սալով։ Առաջին սրահի լայնական պատերին քարերի մեջ փորված են երկուական, երկայնական պատերին՝ մեկական 44 սմ բարձրությամբ և 42 սմ լայնությամբ որմնախորշեր։ Երկրորդ և երրորդ դամբանասրահները միանում են 70 սմ լայնությամբ մուտքով։ Ի տարբերություն առաջին սրահի որմնախորշերի, այստեղ դրանք փորված չեն քարերի մեջ, այլ պատից հանված է մի շարվածք՝ ստեղծելով որմնախորշ։ Այս սրահի հյուսիս-արևմտյան անկյունում գտնվել է վատ պահպանված փայտե դագաղ մանկան կմախքով[33]։ Շուրջը գտնված են անոթների բեկորներ և կահույքի մնացորդներ՝ փայտե ոտք՝ ցուլի սմբակի ձևով, որը ծածկված է եղել բրոնզե կամ արծաթե թիթեղով, փայտե դրվագաղարդ բեկոր՝ աստիճանաձև բարձրացող ատամներով։

Երեք սրահներից վեր դամբարանի ամբողջ հատակագծով 40 սմ միջին մեծության քարերով, 20 սմ հողով, 20 սմ մանր անդեզիտով և նորից հողով

---

[29] T. Özgüç. Altintepe I, p. 42.

[30] Նույն տեղում։

[31] В. Г. Ардзинба. Указ. соч., с. 15, 82.

[32] T. Özgüç. Altintepe I, p. 42.

[33] T. Özgüç. Altintepe II, Mezarlar, Depo Binasive Fildisi Eserler—Tombs, toreho use and Ivories. Ankara. 1969, p. 66.

հավասարեցված է երկրորդ հարկի հատակը[34]։ Այստեղ պահպանվել են հում աղյուսե պատերի մնացորդներ։ Որևէ նյութ ո՛չ այստեղ, ո՛չ էլ մյուս դամբարանների երկրորդ հարկերում չի պահպանվել։ Կասկած չի հարուցում այն, որ այս դահլիճներում տեղի են ունեցել թաղման ծեսի հետ կապված արարողություններ։ Որևէ կապ դամբարանների մուտքի հետ չի երևվում, հետևաբար, նրանք կառուցվել են առանձին մուտքով և թաքցրել դամբարանները։

Երկրորդ դամբարանը կառուցված է քարից, առաջինից մոտ երկու մետր հեռավորության վրա։ Պահպանվել է այս երկու դամբարանները իրար կապող միջանցքը։ Դամբարանը 7,5×5 մ չափերով մի սրահ է։ Ստորգետնյա մուտքը՝ դրոմոսը, 2,9×0,9 մ չափերով, կառուցված է երկու իրար դիմաց տեղադրված քարերով, որոնց մեջ փորված են որմնախորշեր[35]։

Սրահի բարձրությունը 2 մ է։ Երկայնական պատերի մեջ կան երեք, լայնական պատերի մեջ՝ երկու որմնախորշեր, որոնք տարբերվում են առաջին դամբարանի որմնախորշերից նրանով, որ պատրաստված են սրբատաշ սալերի մեջ, 1,25 մ բարձրությամբ և 95 սմ խորությամբ։ Խորշերը քարե սալերով բաժանված են երկու «դարակի»։ Վերին դարակում, 15 սմ տրամագծով փոսում, դրվել է ծիսական նշանակության անոթ։

Քարե սալեր, որոնց վրա դրվել են ծիսական անոթներ, գտնվել են Արգիշտիխինիլիում[36], Ներքին Խնձորում[37], Վերջինում դամբարանի սրահներից մեկի ամբողջ հատակին կան փոսեր։ Օշականում դրանց փոխարեն օգտագործվել են փոքր քարե թասեր՝ սուր հատակով ծիսական անոթների համար[38]։

Սրահի հարավ-արևելյան անկյունում պահպանվել է դեմքով դեպի արևելք շրջված կնոջ կմախք[39]։ Քարե սարկոֆագի բացակայության պատճառով կարելի է ենթադրել, որ դագաղը եղել է փայտից (ինչպես առաջինում)։ Առաջին դամբարանի նման այստեղ էլ մուտքը ծածկվել է երկու ուղղահայաց սալերով, որոնցից մեկում 0,5 մ բարձրության վրա կա 0,25 մ լայնությամբ «պատուհան», որից կարելի է տեսնել սրահը։ Սրբատաշ քարե սալերով մուտքը կրկնակի փակվել է կոպտատաշ քարերով։

Առաջին և երկրորդ դամբարաններից 16 մ հարավ-արևմուտք պեղվել է վերջին՝ ամենամեծ դամբարանը, 8,5×6,75 մ չափերով։ Այն բաղկացած է երեք սրահներից։ 1 մ լայնությամբ և 1,25 մ երկարությամբ միջանցքը տանում է դեպի առաջին դամբանասրահը։ Սրահի կենտրոնում դրված է եղել մեծ բրոնզե կաթսա, որի մեջ գտնվել էին ծալված բրոնզե գոտի, երկու բրոնզե սկավառակներ, ձիու արձանիկներ, սանձ և ձիասարքի այլ մասեր։ Սրահում դրված է եղել նաև մեկ փայտե սեղան և երկու աթոռ, որոնց ոտքերին պահպանվել էին արծաթե ծայրակալներ, բրոնզե ու երկաթե զենքեր, մարտակառքի մնացորդներ[40]։

1 մ լայնությամբ մուտքը առաջին սրահը կապում է երկրորդին, որի բոլոր պատերին սրբատաշ քարերի մեջ կան որմնախորշեր։ Երկրորդ սրահում պահպանվել են երկու քարե սարկոֆագ՝ ծածկված առանց հարդարանքի կամ արձանագրության ուռուցիկ կափարիչներով։ Ինչպես տեսնում ենք, Ճմինում օգտագործվել են փայտե և քարե սարկոֆագներ։ Քարե սարկոֆագներ հայտնի են Վանից, Ներքին Խնձորից, Արգիշտիխինիլիից։ Վերջինից գտնվածի մեջ տեղադրված են եղել չորս աճյունասափորներ՝ ծածկված քրե-

34 Նույն տեղում։

35 Նույն տեղում, էջ 67։

36 А. А. Мартиросян. Аргиштихинили, с. 107.

37 C. A. Burney. Op. cit., p. 107.

38 С. А. Есаян, А. А. Калантарян. Ошакан I. Ереван, 1988, с. 20.

39 T. Özgüç. Altıntepe II, p. 67.

40 Նույն տեղում, էջ 68։

ղաններով[41]։ Բրոնզե սարկոֆագ է գտնվել Զիվիեի պեղումների ժամանակ[42]։ Հետաքրքիր է Օշականի դամբարաններից մեկը, որտեղ գտնվել է 27 նստած կմախք, որոնցից յուրաքանչյուրի տակ կամ կողքին գտնվել են կավե մեկ սարկոֆագի կոտրված բեկորներ[43]։

Ճմինի սարկոֆագներից մեկում կծկված դիրքով, դեմքով դեպի հյուսիս-արևմուտք շրջված տղամարդու կմախք է եղել, երկրորդում՝ նույն դիրքով կնոջ կմախք, տղամարդը 45—50 տարեկան, 175,61 սմ հասակով, կինը՝ 50—55 տարեկան, 153,71 սմ հասակով։ Տղամարդու սարկոֆագի մեջ ոչինչ չի եղել, բայց կողքին գտնվել են ոսկե, արծաթե և բրոնզե կոճակներ, նետասլաքներ, կապարճ, երկաթե վահան։ Կնոջ սարկոֆագի մեջ դրված են եղել ոսկե կոճակներ, թանկարժեք հուլունքներ։ Սրահում եղել են նաև կաղնու փայտից պատրաստված և լավ պահպանված երկու սեղան, խեցանոթներ, փղոսկրից չորս տախտակ սրբազան ծառի պատկերով և ճենապակյա անոթ։

Վերջապես, երրորդ, 2,5×4 մ չափերով սրահում պատերից երեքն ունեցել են մեկական որմնախորշ։ Այստեղ գտնվել են մեծ փայտե սեղան՝ շրջապատված չորս անկյուններում առյուծի գլխի քանդակներ ունեցող բրոնզե շրջանակով և ցածր փայտե գահավորակ։

Երրորդ դամբարանի պեղման ժամանակ ժայռերի ճեղքերում գտնվել են ուղղահայաց դրված, երկրի մակերեսից 10—20 սմ խորությամբ աճյունասափորներ՝ բոլորը լցված մոխրով, առանց որևէ նյութի։ Սափորի վրայի միջանցիկ անցքերը ծածկվել են փոքր քարերով։ Բոլոր սափորները մի տիպի են, հաստ վզով, անհարթ շրթով և կլորավուն իրանով։ Իրենց ձևերով նրանք շատ նման են դամբարանում գտնված բրոնզե ու կավե անոթներին[44]։

Ճմինի թաղումները հիշեցնում են Իգդիրի, Նոր Արեշի, Լճի թաղումները։ Վերջինում ինը թաղումներից երեքը նման են Ճմինի մեկ սրահանոց դամբարանի թաղմանը, իսկ մնացածը աճյունասափորով դրված են հողում։ Դամբարանի տանիքը երեք մետր երկարությամբ սրբատաշ քարերից է և ստեղծում է կեղծ թաղ։ Կեղծ թաղով դամբարաններ հայտնի են Լճում, Ղուշչիում, Վանում, Բաղնոցում, Արծկեում, Երևանյան դամբարանում։ Վերջինս նման է Ճմինի մեկ սրահանոց դամբարանին և կառուցված է սրբատաշ կարմիր տուֆից։ Այդպիսի կառուցողական տեխնիկան ավանդական է Հայկական բարձրավանդակի համար և հայտնի է միջին բրոնզի դարերից (մ. թ. ա. XVIII—XVII դդ.)։

Ենթադրաբար նախնիների երկրպագության հետ է կապված բաց սրբատեղին՝ Ճմինի առաջին դամբարանի մոտ։ Դա 11,7×7,75 մ հարթեցված տարածք է, շրջապատված 1,5 մ բարձրությամբ շաղախով իրար միացված քարերից, որոնց վրա կառուցվել են հում աղյուսե պատերը։ Տարածքը սալապատված է մանր անդեզիտով։ 1 մ բարձրությամբ և 0,7 մ լայնությամբ քարե չորս պատվանդաններին դրված են չորս կոթող՝ առանց որևէ արձանագրության։ Երկրորդ պատվանդանի դիմաց գտնվել է 0,5 մ տրամագծով քարից զոհասեղան, որի փորված կենտրոնում կա 0,14 մ տրամագծով անցք։ Կոթողների հետևի պատի մեջ կառուցված է որմնախորշ։ Հավանաբար, այստեղ եկել են աղոթելու, աստվածներին և հանգուցյալների համար զոհեր մատուցելու։ Սակայն զոհի արյունը սրբատեղից դուրս բերելու համար պետք է որ ցամաքուրդային խողովակներ լինեին, իսկ դրանք բացակա-

---

41 Ա. Մարտիրոսյան, Բ. Թորոսյան. Արգիշտիխինիլի սարկոֆագը.—«Պատմա-բանասիրական հանդես», 1986, № 3, էջ 221։

42 R. D. Barnett. The Treasure of Ziwiye. Iraq XVIII, 1956, p. 111—116.

43 С. А. Есаян, А. А. Калантарян. Указ. соч., с. 70.

44 T. Özgüç. Altintepe II, p. 72.

յում են։ Թերևս կարելի է ենթադրել, որ զոհաբերությունը եղել է այլ ձևով, ասենք՝ զինով։ Զոհաբերություններ կատարվել են նաև որմնախորշում։ Այս առումով Ճմինի սրբատեղին որոշ նմանություն ունի Էրեբունիի հետ, որտեղ գտնվել են նույնպիսի զոհասեղան[45] և «սուսի» տաճարի տարածքում կառուցված որմնախորշեր։

Ճմինի պեղումների ժամանակ գտնվել են սակավաթիվ զենքեր, կահույք և բազմաթիվ փղոսկրյա իրեր։

Զենքերից աչքի են ընկնում խողովակաձև կոթառով, կենտրոնական ողը ընդգծված, ներևաձև շեղբով նիզակները։ Նման նիզակներ հայտնի են Կարմիր բլուրից[46], Իգդիրից[47], Նոր Արեշից[48]։ Գտնվել են նաև երկաթե և բրոնզե նետասլաքներ, որոնք ունեն նշաձև և տերևաձև շեղբեր և կարճ պոչուկներ։ Այդպիսի նետասլաքներ հայտնի են Ներքին Խնձորից[49], Իգդիրից[50], Հայկաբերդից[51], Եղեղնաձորից[52], Արգիշտիխինիլիից[53]։

Զենքերի թվին է պատկանում 0,55 մ տրամագծով անզարդ վահանը, որի ներսի կողմից ամրացված են մեկ մեծ բոնակ՝ ափով բռնելու համար և երկու օղակաձև ելուստներ, որոնք միացվում էին գոտիով՝ արմունկին հագցնելու համար։ Այս վահանը իր տեսակում միակն է, քանի որ մյուս ուրարտական վահանները, գտնված Վանից, Ներքին Խնձորից և հատկապես Կարմիր բլուրից, ուր հայտնաբերվել են քսանից ավելի վահաններ, ունեն լայն, հարթ եզրեր։ Նրանց մի մասի վրա պահպանվել է նաև սեպագիր արձանագրություն։ Վերոհիշյալները, որպես կանոն, եղել են դեկորատիվ՝ տաճարների և պալատների պատերին կախելու համար, իսկ քննարկվողը հավանաբար մարտական է։

Բացի վահանից գտնվել են զրահի մասեր։ Սրանք բրոնզե ուղղանկյուն թիթեղներ են, վերևում կիսակլոր, կենտրոնական մասում ունեն ուռուցիկ գիծ, եզրերին անցքեր՝ կտորին կարելու համար։ Զրահի մասեր կան գտնված Կարմիր բլուրից[54], սակայն դրանք ունեն հարթ մակերես և երբեմն զարդարված են կետանախշով։ Ճմինի զրահները ավելի նման են Հայաստանի ուշ բրոնզեդարյան զրահներին, որոնք հայտնի են Նոր Բայազետից[55]։ Այսպիսով, նման զրահները, հանդես գալով դեռևս ուշ բրոնզեդարում, շարունակում են գոյատևել ուրարտական ժամանակաշրջանում և ըստ երևույթին տարածված են եղել բանակում, քանի որ Սարգոն II-ը, խոսելով Ռուսա II-ի բանակի մասին, ասում է, որ. «...չէր վախենում նրա բազմաթիվ զրահակիր զինվորներից ...»[56]։

Կապարեը, որը գտնվել է դամբարանում, խողովակաձև է, մոտ 10 սմ լայնությամբ, արտաքին մեկ պահպանված օղակով՝ ուսին կախելու համար։

---

45 К. Л. Оганесян. Указ. соч., с. 56.

46 Б. Б. Пиотровский. Кармир блур I, Ереван. 1950, рис. 21.

47 Б. А. Куфтин. Урартский колумбарий у подошвы Арарата и куро-араксский энеолит.—Вестник Гос. Музея Грузии, XIII В., Тбилиси. 1944, табл. II.

48 А. А. Мартиросян. Армения в эпоху бронзы и раннего железа. Ереван, 1964, рис. 93.

49 C. A. Burney. Op. cit., pl. XIII, a. ill. 21.

50 Б. А. Куфтин. Указ. соч., табл. VII, рис. 1—7.

51 A. Erzen. Cavustepe, s. 39.

52 С. А. Есаян, О. С. Хикикян. Находки биайнийских изделий в Ехегнадзорс.—Вестник Ереванского университета, 1990, № 3, табл. 1, рис. 8—9.

53 А. А. Мартиросян. Аргиштихинили, рис. 8—96.

54 Б. Б. Пиотровский. Кармир блур III. Ереван, 1955, с. 32, рис. 23.

55 С. А. Есаян. Доспех Древней Армении. Ереван, 1986, с. 46, табл. XIV.

56 И. М. Дьяконов. Ассиро-вавилонские источники по истории Урарту.—Вестник древней истории, 1951, № 2—3, с. 235.

Ստորին մասում մնացել են կաշվի հետքեր։ Վերին բաց մակերեսը զարդարված է ուռուցիկ հորիզոնական գծերով և զիգզագներով։ Այս կապարճը նման է Ներքին Խնձոր ամրոցից գտնված կապարճներին, որոնք նույնպես նեղ են, ունեն ուռուցիկ զարդամոտիվներ և տարբերվում են Կարմիր բլուրի ավելի լայն կապարճներից, որտեղ տեղավորվում են 35—40 նետեր, և որոնք զարդարված են առյուծների, մարտակառքերի պատկերներով։

Հայտնաբերվել են նաև ձիասարքի մասեր։ Դրանցից աչքի է ընկնում շքեղ սանձը, որն ունի երկմասանի լկամ և նրա մասը կազմող զույգ շարժական ելուստներ (պսալիաներ), որոնց ծայրերը զարդարված են ձիու գլխի քանդակներով[57]։ Դրանց հետ մեկտեղ գտնվել են երկու կիսակլոր, 10—11 սմ երկարությամբ բրոնզե թիթեղներ, որոնց եզրերին կան անցքեր՝ կաշվին ամրացնելու համար։ Այս թիթեղները պաշտպանելու էին ձիու ճակատն ու այտոսկրերը։ Նման ավելի փոքր թիթեղները ամրացվում են սաղավարտին՝ մարդու դեմքը պահպանելու համար։

Զենքերից բացի գտնվել են մի շարք կենցաղային առարկաներ։ Դրանց թվին են պատկանում երկու եռոտանի պատվանդանները։ Մեկը կարճ է, ոտքերը ցլի սմբակի ձև ունեն և նրանցից բարձրանում են հինգ դեպի վեր լայնացող ձողեր, որոնք վերին մասում, իրարից չանջատվելու համար, միացված են բրոնզե օղակով[58]։ Յուրաքանչյուր ձողի վերին մասում հորիզոնական դիրքով ամրացված օղակ կա, որի վրա ըստ երևույթին դրվել է մետաղե կամ կավե ձիթաճրագ, և պատվանդանը ծառայել է իբրև աշտանակ։ Ռ. Բարնետը նշում է, որ դրանց վրա դրվելիս են եղել տեղում գտնված բրոնզե թասերը[59]։ Այս դեպքում եռոտանին պետք է ունենար ծիսական նշանակություն։ Սակայն մեզ թվում է, որ մեր ենթադրությունը ավելի ճիշտ է, քանի որ Կարմիր բլուրում նույնպես գտնվել է եռոտանի աշտանակ, որի վերին մասում օղակի փոխարեն կա փոքրիկ թասաձև ելուստ, որտեղ հավանաբար լցվել է ձեթը[60]։

Երկրորդ եռոտանու ոտքերը նույնպես ցլի ոտքերի ձև ունեն և յուրաքանչյուրից սուր անկյան տակ բարձրանում են երեքական ձողեր՝ վերևում ամրանալով մեծ օղակի։ Եռոտանու բարձրությունը 0,6 մ է, տրամագիծը՝ 0, 58 մ։ Եռոտանու մոտ գտնվել է 0,72 մ տրամագծով և 0,51 մ բարձրությամբ բրոնզե կաթսա, ուսերին ամրացված երեք ցլի գլուխներով։ Նման բրոնզե կաթսաներ և նրանց կավե նմանակները հայտնի են Կարմիր բլուրի ամրոցից[61] և քաղաքային թաղամասից[62], Դվինից[63], Բառնոցից[64] և Երևանի դամբարանից[35]։ Անկասկած, այս կավե անոթները բրոնզե կաթսայի նմանակներն են, որոնք հայտնի են Վանից, Ղուշչիից (Ուրմիա), Ալիշարից, Կումայից, Գորդիոնից[66], ինչպես նաև վերջին ժամանակներում Թուր-

---

57 T. Özgüç. Altintepe Kazilarli—Excavations at Altintepe—Altintepe'de Urartu mimarlik eserlari.—Belleten 2[illegible] (98), 1961, s. 257, res. 17.

58 R. D. Barnett and Gökçe. Op. cit., p. 125. III. 1.

59 Նույն տեղում։

60 Б. Б. Пиотровский. Кармир блур I, с. 69, рис. 42.

61 Նույն տեղում, էջ 70, նկ. 43։

62 А. А. Мартиросян. Армения в эпоху бронзы и раннего железа, с. 171, рис. 72 (1,2).

63 К. Х. Кушнарева. Древнейшие памятники Двина. Ереван, 1977, с. 23, рис. 23.

64 Louis Vanden Berghe en Leon de Meyer. Urartu. 1983, III. 194.

65 Նյութերը հանձնված են հրատարակության։

66 Б. Б. Пиотровский. Искусство Урарту, рис. 28—30, 32.

քիայում կատարված թալանչիական պեղումներից, որոնց նյութերի մի մասը ընկել է Եվրոպա և Ճապոնիա[67]։

Դամբարաններից մեկում գտնվել են երեք մետաղե գնդաձև կաթսաներ, որոնց ուսերին անցքեր կան. կաթսաները ծառայել են իբրև աճյունասափորներ։ Նման աճյունասափորներ հայտնի են Էրեբունիից, Արգիշտիխինիլիից, Նորագավթից, Պարսկահայքից, Իգդիրից, Արծկեից, Լճից, Դիդիլիջ, Երևանյան դամբարանից և այլ վայրերից։ Հետաքրքիր է, որ վրայի անցքերը, ըստ Բ. Ա. Կուֆթինի[68], արվում էին նրա համար, որ դիակիզումից հետո հոգիները դուրս գան անոթից։ Անցքերը բացվել են անոթը թրծելուց հետո, որը վկայում է, որ դրանք պատրաստվել են ոչ որպես հատուկ աճյունասափոր, այլ որպես կենցաղային իրեր։

Դամբարանում գտնվել են կահույքի բազմաթիվ մասեր, սեղանի ոտ աթոռի ոտքերի արծաթե և բրոնզե ծայրակալներ՝ առյուծի ուղղի ոտքերի տեսքով և աթոռի շերտաձողերը զարդարող վարդյակներ։ Երրորդ դամբարանում գտնվել է քառակող սեղանի մետաղե շրջանակ, որի չորս անկյուններում տեղադրված են եղել առյուծի գլխի տեսքով քանդակներ։ Բրոնզե սեղան է գտնվել տաճարի սյունաշարի տարածքում։ Հետաքրքիր է, որ սեղանն ունի երեք ոտք, որը մինչև այժմ չի հանդիպել ուրարտական նյութերում։ Կլոր սեղանների պատկերներ կան Ագանայի թանգարանում պահվող դոտիներից մեկի վրա[69]։

Ճմինի ամրոցում և դամբարաններում գտնված նյութը սրանով չի սահմանափակվում։ Ինչպես նշում է Բ. Պիոտրովսկին, Թ. Օզգյուչի բանավոր հայտարարության համաձայն գտնվել են մի քանի բրոնզե գոտիներ՝ սաղավարտավոր և նիզակակիր հեծյալների, առյուծի, ցուլի, կենտավրոսների պատկերներով[70]։

Ուրարտական արվեստի լավագույն նմուշներից են Ճմինում գտնված փղոսկրե իրերը, որոնք հայտնաբերվել են տաճարի սյունաշարի տարածքում և դամբարաններում։ Փղոսկրի օգտագործումը լայն տարածում է ունեցել Հին Արևելքի երկրներում։ Հյուսիսային Սիրիան փղոսկրե իրերի արտադրության կենտրոններից մեկն էր և ոչ միայն արտահանում էր հումք ու պատրաստի արտադրանք, այլև այդ բնագավառում իր ազդեցության ոլորտում էր պահում հարևան երկրները, որոնց թվում նաև Ուրարտուն[71]։ Թոփրակ կալեում[72] և Կարմիր բլուրում[73] պեղումների ժամանակ գտնվեցին մեծ քանակությամբ և վարպետորեն պատրաստված փղոսկրե իրեր (մարդկային իրան, դեմք, առյուծի փոքր քանդակ, աստվածների արձանիկներ, կահույքի մասեր կազմող իրերի բեկորներ և այլն)։ Հիշատակենք նաև, որ մեծ քանակությամբ փղոսկրե իրեր են առգրավվել Սարգոն II-ի կողմից Մուսասիրի գրավման ժամանակ։

Վանում, Ճմինում և Կարմիր բլուրում գտնված փղոսկրյա իրերը, ինչպես նաև չօգտագործված փղոսկրի առկայությունը Ճմինում վկայում են,

---

[67] K. Tanabe, A. Hori, T. Hayashi, S. Miyashita, K. Ishida. Studies in the urartian bronze objects from Japanese Collection (1).—Bulletin of the ancient orient museum, vol. IV, Tokyo, 1982 p. 76, pl. 64.

[68] Б. А. Куфтин. Указ. соч, с. 70.

[69] O. A. Tasyürek. The Urartian Belt in the Adana Regional Museum. Ankara 1975, III 4

[70] Б. Б. Пиотровский. Искусство Урарту, с. 75, рис. 4.

[71] T. Özgüç. Altinlepe II, p. 85.

[72] R. D. Barnett. The Excavations of the British Museum at Toprak Kale near Van, pl. X, 4.

[73] Б. Б. Пиотровский. Искусство Урарту, с. 90.

որ փղոսկրը լայն տարածում է ունեցել ուրարտական արվեստում և փղոսկրյա իրերը պատրաստվել են տեղի արհեստանոցներում։

Ճմինում գտնված արծվագլուխ թևավոր աստվածներից երկուսը տեղադրված են ուղղանկյուն հիմքի վրա։ Մի ձեռքում նրանք պահում են պտուղ, մյուսում՝ ծաղկեփունջ։ Նրանց գլուխները, հագուստը տրված են բոլոր մանրամասներով։ Սրանք և գտնված երրորդ թևավոր աստվածը Զիվիևից[74] և Նիմրուդից[75] հայտնաբերված արծվագլուխ աստվածների զուգահեռներն են։

Լավ են պահպանվել առյուծների փոքր քանդակները, որոնք գտնվել են տաճարի սյունաշարի տարածքում։ 10 սմ բարձրություն և 4,5 սմ լայնություն ունեցող, նստած դիրքով քանդակված առյուծի դեմքը, բաշը, իրանը տրված են մանրամասներով։ Արձանիկի ներքևի մասում կա ուղղանկյուն բացվածք, որով նա միանում էր այլ իրերի։ Գտնված մյուս երկու առյուծները ամրացված են եղել եռոտանուն։ Նրանցից մեկը, որ ունի 29,5 սմ երկարություն և 18 սմ բարձրություն, Մերձավոր Արևելքի մեզ հայտնի առյուծի ամենամեծ քանդակն է և շատ նման է Ներքին Խնձորի[76] և Ազնավուր Թեփեի[77] բրոնզե առյուծներին։

Ծղջերուի փորագիր քանդակը (3,8 սմ լայնքով և 5 սմ բարձրությամբ) բոլոր կողմերից, նաև իրանի և վզի վրա, ունի անցքեր, որոնք դրվագազարդված են եղել ոսկով ու թանկարժեք քարերով։ Հետաքրքիր է կամարաձև զարդասալ աշտարակի մանրակերտը, որն իր փայտե և ոսկե զուգահեռներն ունի Ճմինի առաջին դամբարանում և Կարմիր բլուրում։

Դամբարաններում հայտնաբերվել են մեծ մասամբ կահույքի փղոսկրյա դրվագազարդ մասեր, արձանիկների առանձին բեկորներ, կենաց ծառի մի քանի փորագիր նմուշներ։

Ճմինի նյութական մշակույթի մեջ կարևոր տեղ են գրավում խեցեղեն իրերը և մասնավորապես կարասները, որոնք եղել են ամրոցի երկու պահեստային սենյակներում։ Դրանք մանրամասն նկարագրված չեն, սակայն ընդհանուր տեսարանների նկարներից և գրքում պատկերված կարասի միակ գծագրից պարզ երևում է, որ դրանց մի մասն ունի ձգված իրան՝ վերին մասը զարդարված երկու զուգահեռ հարթ գոտիներով, որով նրանք տարբերվում են Էրեբունիի, Կարմիր բլուրի, Արդիշտիխինիլիի կարասներից, որոնք զարդարված են սեղմվածքներով։ Ճմինի կարասների նմանակները, նույն հարդարանքով, հայտնի են Ներքին Խնձորից, Թոփրակ կալեից, Ջերնակի թեփեից։ Այդպիսի հարդարանք կա նաև Այգեվանի մ. թ. ա. IX—VIII դդ. սև փայլեցված մեծ կարասի վրա։

Նյութերի մեջ աչքի է ընկնում սնամեջ ոտքով գավաթը։ Նման գավաթներ մեծ թվով հայտնի են Էրեբունիից, Արգիշտիխինիլիից, Ներքին Խնձորից և այլ հուշարձաններից։ Այս գավաթները լինում են երկու տեսակ։ Առաջինը պատերին ունի անցքեր և օգտագործվում է կարասները ծծմբով ախտազերծելու համար, իսկ երկրորդ տեսակին պատկանողները շքեղ գավաթներ են, լավ փայլեցված մակերեսով, և ունեն ծիսական նշանակություն։ Ճմինի գավաթները երկրորդ տեսակից են։ Դրանցից մեկն ունի հարթ մակերես, իսկ երկրորդը՝ զարդարված է բոլորապտույտ նախշով, թեք գծերով ու շրջանակներով։ Դժվար է ստույգ ենթադրություններ անել, բայց մեզ թվում է, որ նախշերը ոչ թե ներճկված են, այլ արված են գույներով։

---

[74] Andre Godard. Le Treson de Ziwiye. Haarlem. 1950, p. 36, pl. 25, p. 45, ill. 30.

[75] M. E. L. Mallowan. Nimrud and its Remains II. Aberteen, 1966, p. 594, № 575.

[76] C. A. Burney. Op. cit., pl. X, a, b.

[77] R. D. Barnett. A catalogue of the Nimrud Ivories. London, 1957, p. 22, pl. CXXX, CXXXI.

Եթե մեր այս ենթադրությունը ճիշտ է, ապա այս գավաթը լրացնում է ուրարտական սակավաթիվ զունազարդ անոթների շարքը, հայտնի Կարմիր բլուրից (ճտքավոր կոշիկն ու «ասկոս» տիպի անոթը), Օշականից (սափոր)։

Կարասներից ու գավաթներից բացի գտնվել են թասերի և քրեղանների բեկորներ, որոնք ունեն ներճկված, ուռուցիկ, դուրս ճկված շրթեր ու տափակ կամ կլորավուն իրաններ։

Նշված նյութերը թույլ են տալիս պարզաբանել ամրոցի թվագրությունը։ Նյութի մի մասը, հատկապես խեցեղենը, լայնորեն հանդիպում է մ. թ. ա. VII դարի հուշարձաններում՝ Ճմինի ամրոցի գոյատևման վերին սահմանում։ Հուշարձանի հիմնադրման ժամկետը դժվար է հաստատել։ Թ. Օզգյուչը, շինարարական տեխնիկայից և նյութերից ելնելով, թվագրում է ամրոցը մ. թ. ա. VIII դարի II կես—VII դարով։ Որմնանկարների ուսումնասիրությունը վկայում է, որ հուշարձանը հիմնադրվել է մ. թ. ա. VIII դարի սկզբին կամ առաջին կեսին։ Էրեբունիի և Ճմինի որմնանկարները, բացի մասնակի տարբերություններից, ճաշակս նույնն են, բայց տարբերվում են Կարմիր բլուրի ավելի ուշ կառուցված ամրոցի որմնանկարներից։ Ինչ վերաբերում է ճարտարապետությանը, ապա Ճմինի տաճարը նման է Հայկաբերդի տաճարին, որն ինչպես հայտնի է արձանագրությունից, կառուցվել է Սարդուրի II-ի օրոք (մ. թ. ա. 760—730 թթ.)։ Ամենայն հավանականությամբ Աչթին թեփեն կառուցվել է Արգիշտի I-ի կառավարման վերջում կամ Սարդուրի II-ի կառավարման առաջին տարիներին, որովհետև նրա կառավարման երկրորդ կեսն արդեն բնորոշվում է Ասորեստանի հզորացմամբ և դեպի Ուրարտու կատարված մի շարք արշավանքներով։ Հատկապես Թիգլաթպալասարի գահակալության օրոք պաշարվում է անգամ Ուրարտուի մայրաքաղաք Տուշպան։ Թիգլատպալասարը հայանում է, որ իր պատկերը տեղադրել է քաղաքի դարպասի դիմաց։ Ռուսա I-ի օրոք, չնայած ժամանակավոր հաջողությանը, Սարգոն II-ը մ. թ. ա. 714 թ. նորից արշավում է Ուրարտու և անգամ գրավում նրա հոգևոր կենտրոնը՝ Մուսասիրը։ Դժվար է ենթադրել, որ այդպիսի քաղաքական իրավիճակում, երբ ուրարտական թագավորների ուշադրությունը կենտրոնացված էր Ասորեստանի և կիմմերների կողմից սպառնացող վտանգի վրա, կառուցվեին Ճմինի նման հզոր ամրոցներ։ Ամենայն հավանականությամբ այս ամրոցը կառուցվել է մ. թ. ա. VIII դարի առաջին կեսին և կործանվել մոտավորապես մ. թ. ա. 590-ական թթ.։

РАСКОПКИ ДЖИМИНА (АЛТИН ТЕПЕ)

(Урартские памятники Западной Армении)

Доктор ист. наук С. А. ЕСАЯН, Л. В. АБАДЖЯН

Резюме

Джимин (Алтин тепе)—одна из наиболее хорошо сохранившихся крепостей у западной границы Урарту—расположена на верхней части 60 м холма, в 4 км от села Джимин, по имени которого мы считаем целесообразным назвать этот памятник. После нескольких случайных находок в 30-ых годах экспедиционная группа, возглавляемая археологом Т. Озгючем, начала систематические раскопки. В основу настоящей статьи легли материалы Т. Озгюча, опубликованные автором и другими зарубежными исследователями. Эти материалы впервые публикуются на армянском языке. Во время раскопок крепости были найдены редкая по толщине 12 м крепостная стена, храмово-дворцовый комплекс, складские помещения и три гробницы с богатым и хорошо сохранившимся материалом. Архитектурные черты строений, а также археологический материал позволяют датировать крепость началом VIII в. до н. э. Крепость погибла в VI в. до н. э. от землетрясения.